

**Գ Ի Ր**  
**ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ**  
**ԱՌ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՍԻՄՈՆ ԵՒ ՆԷՆՍԻ ՏԻՊՈՅԵԱՆ**

Մեզի համար հոգեկան ուրախություն է վկայել ձեր ազգասիրական ու եկեղեցանուէր աշխատանք-  
ներուն մասին:

Աթլանթայի նորահաստատ համայնքին մէջ ձեզի նման անձնուէր հաւատացեալներու ներկայութիւնն  
ու յանձն առած զոհողութիւնները եղած են քաջալերական եւ օրինակելի:

Դուք, որպէս Աթլանթայի Հայց. Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի ատենապետ եւ խորհրդական, ձեր  
ժամանակն ու կարողութիւնները ի սպաս դրիք տեղական համայնքի կազմութեան եւ բարօրութեան ի  
նպաստ: Երկար տարիներ անսակարկ կերպով ծառայեցիք Եկեղեցւոյ եւ ուղղութիւն տուիք ձեր պաշ-  
տօնակիցներուն:

Մեր մաղթանքն է որ յաջողութեամբ պսակուին եւ արդիւնաւորուին ձեր նոր ծրագիրները:

Որպէս Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմին Կ'օրհնենք ձեզ եւ կը գնահատենք  
երկարամեայ ձեր եկեղեցանուէր ծառայութիւնները: Կ'աղօթենք որ Տէրը Իր հովանին անպակաս ընէ ձեր  
ու ձեր հարազատներուն վրայէն եւ Իր շնորհներով զարդարէ բոլորիդ կեանքի օրերը:

Սիրոյ ողջունի

*Խաժար Արք. Դրասան*  
ԽԱԺԱԿ ԱՐԲ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
Առաջնորդ

Ապրիլ 20, 1996 - Նիւ Եորք, Ն. Ե.